

Վարազ Սևակյան

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԸ

Զարմանալի մի խորհուրդ ունի Մեսրոպյան հայերենը. մի խորհուրդ, որ 1600 տարվա բոլոր մտավորական սերունդներին հանելուկ, անլուծանելի հանգույց է թվացել: Առաջին անգամ դրի առնվեց Մեսրոպի ձեռքով, բայց համակերպ է. երգ իր ձևի կատարյալ հնչականությունից, շարժման կշռույթով, ներշնչումներ ու ապրումներ արտահայտելու անտես հնարավորություններով, մտքերը մարմնավորելու պայծառ, հստակ և ստույգ սեղմություն: Սեղմությունը Մեսրոպյան հայերենի ոգին է, նրա էությունը, այն տաշվածքն ու քանդակումը, որը կխաթարվի արդեն, եթե նույնիսկ բոցի մի թեթև հարված հասցվի: Իսկապես ի՞նչ խորհուրդ է սա: Մեսրոպի աստվածային հանճարը միանգամից հորդեց. բայց չէ՞ որ առաջին բոլոր ազնիվ բխմունքները իրենց հետ բերում են նաև խարամ, տիղմ, ավելորդ զանգվածներ, որոնք հետո զտվում են այլ գործողություններով: Այս բխմունքը չունի մրուրի հյուլ, զտված է ընդերքում, անցել է աղբյուրացնող շերտերով և ցայտել է իրրև ներքին հրայրքը զովացնող վճիռ ջուր, տրվել է մեզ իրրև սրտուտ ցորենի հաց, իրրև սիրտ ու հոգի մաքրող վսեմական արվեստ, որ հենց իր ծննդի օրից դարձավ մեր կենսահաստատ մարմարյա վեմը, մեր գոյության անհուն մատչանը, հայոց ժողովրդի կյանքի նարոտը հատող բոլոր դահիճների ու փորձությունների դեմ թրթռացող հաղթական դրոշակը:

Ինչպե՞ս մեկնաբանել, ինչպե՞ս լուծել այս առեղծվածը: Արդյոք Մեսրոպը շարունակողն էր մի շենշող ոչնչացված դրականության ու լեզվի, թե ինքը սկիզբների սկիզբն է, բիրտական այն սուրբը, որ գավազանի հարվածով աղբյուր է հանում անապատում: Այս հարցերը բանասիրությանն են վերաբերում, և մենք այստեղ նպատակ չունենք դրանցով զբաղվելու: Մենք պետք է փորձենք բացահայտել այն մի քանի առանձնահատկությունները, որոնք Մեսրոպյան հայերենը դարձրել են երգ ու բանաստեղծություն, և արժանացրել հայրենի ու օտար հայագետների ջերմ հիացքին ու խանդաղատագին վերաբերմունքին:

Մեսրոպյան անվանումը նոր է դրարարի առաջին 50—60 տարվա շրջանի համար, որ ընդգրկում է 401 թվականից մինչև 460 թվականը: Ավանդաբար այդ շրջանի հայերենը կոչում են դասական կամ ոսկեդարյան հայերեն, որը մեզանում մեսրոպյան է կոչվել մեծ հայագետ Հ. Աճառյանի կողմից 1951 թվականին:

Վիեննայի Մխիթարյան մի քանի սաներ 19-րդ դարի 50-ական թվականներին շարունակաբար կարդալով հայ հին մատենագրական երկերը, նկատեցին, որ V դարի առաջին 60 տարվա գրական լեզուն զանազանվում է հետագա շրջանի երկերի լեզվից: Նկատելով որոշ զանազանություններ, նրանք խորացան իրենց պրպտումների մեջ և անընդհատ ավելացրին դրանք: 1860 թվականին այդ զանազանությունները ամփոփեցին իրրև լեզվի երկու շրջանը անջրպետող հիմնական գործոններ և առաջին շրջանի լեզուն կոչեցին դասական հայերեն,

իսկ երկրորդինը՝ ետգասական: Հետադաշտում առաջինը կոչվեց նաև ոսկեղար-
յան, որ գործածական էր նաև մեզանում:

Մի հարյուրամյակում շարունակաբար պրպտվեցին տարրերակիչ առանձ-
նահատկությունները. սրանք անընդհատ ավելացան և ձևավորվեցին իրրև ոճա-
րանական տարրերություններ, լեզուն երկու շրջանի բաժանելու համար:

Այդ զանազանող առանձնահատկությունները հիմնական գծերով հետևյալ-
ներն են.

1) Մեսրոպյան հայերենը չունի մի շարք բայեր, որ հետագայում սեփա-
րական են. ինչպես՝ տրոհել, տրամանալ, տարփալ, շահատակել, վրդովել, կա-
ռուղանել, բասրել, յարմարել, աղօթել, հետևել, երկրպագել, պատասխանել,
փառատրել, պատասխանատրել, փառարանել, շողոմել և մի քանի ուրիշներ:

2) Չեն գործածվում վալաշ, վեհ, գոռոգ, արփի, յաւտ, սևո, տառ, որակ,
տեսակ, էակ, սաղարթ, վսեմ, բառ, բայ, հրաշք, փեթակ, քանակ, տոփանք,
անդանօր, ուրանօր, խրախճանութիւն, սաղար, նուաւո, կիրք, կոհակ, հրաշա-
փառ, փարթամ, հեշտալի, հեշտութիւն, քոյակ, աղցք և այլ բառեր:

3) Չեն գործածվում ապ, ապա, առ, բաղ, բաց, գեր, դեր, էնթ, հոմ, մակ,
յար, ներ, շաղ, շար, պար, ստոր, վայր, վեր, տար, տրամ, փաղ նախամասնիկ-
ները, ուստի և չեն պատահում՝ անդրադարձել, ապաստութիւն, արտաբերել, բաղ-
կանալ, բախտութիւն, գերադրական, գերազանցել, դերանուն, ենթադրել, հա-
կաճառել, մակագրել, յարանուն, յարատեւել, ներգործել, ներկալ, ներկուռ,
շաղկապ, շաղկաւի, շարադրել, պարունակել, ստորոգել, ստորադաս, վերա-
բերել, վերծանել, տրամադրել, փաղառութիւն և այլն:

4) Ան ածանցք չի դրվում ելի-ով վերջավորվող ապաւնի գերբայի վրա.
ուստի չի լինում անտանելի, անբաժանելի, անփոփոխելի, անսասանելի և այլն:
Միայն ասվում է՝ անբաժան, անփոփոխ և այլն:

5) Այլն ածանցով չեն կազմվում աստուածային, հրեշտակային, երկնային,
մարդկային... այդ ածանցք դրվում է միայն տեղ արտահայտող բառերի վրա,
լեռնային, քաղաքային...

6) Ամեն բառը բարդվում է միայն բայարմատի հետ. ածականի հետ բար-
դություն չի կազմում. լինում է՝ ամենադէս (ամեն բան իմացող), ամենահնար
(ամեն բան հնարող), բայց չի ամենամեծ (ամենից մեծ), ամենարարի (ամե-
նից բարի) և այլն:

7) Չեն գործածվում ուփի, զան, ան վերջածանցները, ուստի չկան իշխա-
նուհի, սրբազան, բազմազան, լուսաճևմ, երկնաճևմ և այլն: Կա միայն զա-
նազան բառը, որ նշանակում է պեսպես, տեսակ-տեսակ:

8) Ել-ով վերջավորվող անորոշ գերբայ չկա: Բայը ներկայում լինում է
լսօսոս, րնդոնիս, սակայն անորոշն է խօսել, ընդունել:

9) Մի քանի բառեր ձևափոխվել են. օրինակ՝ հիւսիսի դարձել է հիւսիս,
արծուի՝ արծիւ, պատասխանի՝ պատասխան:

Ահա սրանք են այն գլխավոր տարրերությունները, որոնք անջրպետում են
մեր հին գրական լեզվի երկու շրջանները: Այստեղ նշենք նաև, որ սրանցից մի-
մասը՝ փաստեր լինելով հանդերձ, դեռևս կուսանելը չեն երկու շրջանների բա-
ժանման համար: Շատ հնարավոր է, որ առաջին շրջանում պատահաբար կեն-
ցաղ, արփի, տառ, բայ և այլ բառեր չեն գործածվել, որովհետև տվյալ դեպքում
դրանց կարիքը չի գոյացվել: Արդյո՞ք հետագայի բոլոր գրողներն են գործածել
այդ բառերը, իհարկե ոչ. այս դեպքում էլ դրանք պատահական են: Մտնովանդ

որ տարրերակույ կետերի մեջ նշվում է նաև, որ առաջին շրջանում մեկ երկու անգամ կամ երկրորդարար դործածված են փարթամ, մաղթել, վիթխարի, խոհեմ, բոլոր, յոլով, անտեսանելի, աստուածային և այլ բառեր: Եթե մի կամ երկու անգամ կան, պետք եղած դեպքում երրորդ, չորրորդ անգամ էլ կկիրառվեն: Իսկ ինչ վերաբերում է բարդ բառերին, ապա դրանք անընդհատ կազմվում են լեզվում և հետագա շրջանի կազմվածները բնականաբար նախորդ շրջանում չեն կարող լինել:

50—60 տարվա մի ժամանակաշրջանում ամեն լեզվի մեջ էլ անշուշտ փոփոխություններ կատարվում են: Առանց փաստերի լոկ մտքով պատկերացնենք մեր նոր գրական լեզվի վիճակը մինչև 70-ական թվերը, յոթանասունական թվերից մինչև 90-ական, ապա դրանից հետո մինչև 1920-ական թվականները և հետագա քառասունամյա շրջանը: Կարծում ենք, որ այս պարագաներում տարրերությունները պետք է մի քանի անգամ բազմապատկել: Ինչ որ է, զանազանությունները առկա են, դրանք ռեաբանական որոշ գույն ու երանգ են տալիս լեզվին և լայն ճանաչում են գտել բանասիրության կողմից:

Առանց դրանց մեսրոպյան հայերենը իր լույսն ու հրաշալիքներն ունի, որոնք դարձան մեր լեզվի անկապուտ սեփականություններ:

Մեսրոպը և իր աշակերտները սովորական թարգմանիչների նման միայն ձեականորեն չհայացրին օտար երկերը: Այդպիսի թարգմանությունը շատ կրճատեմար հունարանական հայերենին, և այն փրկարար նպատակը, որ Մեսրոպ առաջադրել էր, կմնար անկատար: Նրա լուսավոր իզմն էր՝ ստեղծել հայերեն գիր ու գրականություն, գրական լեզու, որ լինի իր ձևով ու էությամբ ազգային, որ հայ գրավոր խոսքը բնական ու տոհմիկ կենսահյուսված լերթու, որ նա հնչի իրեն հայ մարդու սրտի և ուղեղի արգասիք: Նա հանձարեղ մարդ էր, և իր հանձարի լույսով պարզեց մեր լեզվի հնչական նրբությունները և ամենանուրբ ճշգրտությամբ նոտագրեց հայերենի սրբացած երկաթադիր տառերով:

Մեսրոպը մինչև հնչական նրբություններին հասնելը իր մեծ հոգով ու պայծառ մտքով ըմբռնել էր մեր լեզվի ողին, նրա ազգային բնույթն ու էությունը. եթե այս մարդում թերանար նա, ապա իր հոյակերտ շինվածքը չէր տուր հայ ազգին վիճակված դժնադույն ժամանակին ու պատմական անասելի արհաւիրքներին, որոնք եկան ու զարկվեցին մեր բարձր մշակույթի, գիր ու գրականության ամրակուռ կոփվածքին, փշրվեցին ու անցան իրենց հետ տանելով նաև իրենց ծնող, քունդիչ ու ապականիչ ուժերը: Մեսրոպը լավ էր ըմբռնում, որ ավանդը կյանքի գնով պահպանվում և փոխանցվում է սերունդից սերունդ, երբ այն իր արժեքով անչափելի ու անկշռելի է. նա այդպիսի ավանդ կուտակեց հայ ժողովրդին, մի ավանդ, որ իր անչափելիության ու անկշռելիության համապատասխան սրբացավ, խորհրդավոր կախարդանքի կերպարանք առավ, որից հայ մարդը չրաժանվեց նույնիսկ այն ժամանակ, երբ տարագրության հին ու նոր անապատներում խորշակահարվում էր: Մեսրոպը պայծառ տեսիլքով նայում էր հեռավոր ապագային և դարեմուտի սահմանազլխին կանգնած Հայաստանի բարձունքներից տեսնում ու զգում էր եկող տազնապալից ժամանակները, որոնք պետք է ծովամույն անեն իր անխառն ժողովրդին. և նա գիրն ու գրականությունը, հայույն լեզուն հանձնեց նրան, որ նա դա դարձնի իր փրկության խարիսխը և հավետ գոյության խորհուրդը: Մեսրոպը արեց, իսկ մենք հանձն առանք՝ ավանդը թողնելուց առաջ կյանքը թողնել:

Մեսրոպյան հայերենի ողին, նրա հղկվածության ու կոփվածքի էությունը նրա սեղմությամբ է պայմանավորվում: Երբ լեզուն հնարավորություններ ունի ընդարձակ ամբողջությունները արտահայտելու հակիրճ ու կտրուկ լանձևումներով, ապա զրոգի համար դուրին պայմաններ կան պահպանելու լեզվի կըշտույթը: Նրա հնչական ու հնչերանգային ցանկալի առանձնահատկությունները, որոնցով էլ իրացի ձև են ստանում երգայնությունը, առանձին մասերի համաշափությունն ու հավասարակշռությունը, մտքերը արտահայտելու դիպուկությունը, հավաքվածությունը, կազմակերպվածությունը, որոնք նպաստում են լեզվի կապակցական միջոցների անհարկի կրկնությունների վերացմանը. կապակցական միջոցների անհարկի կրկնությունները, ճոռում, ձգձգված ու դանդաղաշարժ ոճի բնութագրական հատկանիշներն են: Մեսրոպյան հայերենը բարդ նախադասությունները արտահայտում է դասական այնպիսի հակիրճությամբ, որ շաղկապներն ու կապակցման միջոցները իսպառ վերանում են, և բարդ ամբողջությունը խտանում է մի ամփոփ ու սեղմ շրջանակում. օրինակ՝ Ես որ զիսն սիրեն, սիրեմ, և որ զիսն խնդրեն, զտցեն շնորհս (Առակք, Ը, 17): Որպէս ազոխ ատամանց վնասակար է և ծուխ աչաց, նույնպէս և անօրէնութիւն, որոց վարին նովաւ (Առակք, Ժ, 26): Այսպիսի նախադասությունները եթէ ստույգ թարգմանենք աշխարհաբարով կատանանք՝ նրանք, որ ինձ սիրում են, ես էլ նրանց եմ սիրում: Նրանք, որ ինձ որոնում են, շնորհներ կդոնեն: Ինչպես ազոխը ատամներին է վնասակար և ծուխը աչքերին, նույնպես էլ անօրենությունը վնասակար է նրանց, որոնք նրանով են կառավարվում:

Գրարարի հոգերը այս սեղմության համար ուղղակի աննման միջոցներ են, որոնցից մեր զրական լեզուն խույս է տալիս, մինչդեռ բարբառները հետևում են զրաբարին կամ ավելի ճիշտ նրա նման են: Այսպես՝ Երեմն հատկացուցիչը միայն հոգով արտահայտում է նաև հատկացյալը, որ զրաբարի լավագույն առանձնահատկություններից մեկն է. հատկացուցիչը առնում է նաև հատկացյալի նախդիրը. օրինակ՝ Որպէս ես զիման սպանի, դու զքոյսն (Բուզ. 5, Դ): Մինչ տղայն էի, իբրև զտղայ խորհէի, այլ իբրև Էղէ այր, զտղայուրեանն խափանեցի (Եզն. 3, 2): Ծիշա է, աշխարհաբարում կասվի իմոնք, քոնոնք, որոնք բարբառային արտահայտչություն ունեն, սակայն զտղայուրեանն, որ նշանակում է երեխայական սովորությունները, ոչ մի կերպ հնարավոր չէ մի բառով արտահայտել: Հակիրճության այս հնարը այնքան է առաջ գնացել, որ կարելի է նաև առանց հոգի արտահայտել, օրինակ՝ Քանզի զեղեցկացան ծնօտք քո իբրև զտատուակի (Երգ երգոց, Ա, 9):


Սեղմության և հակիրճության նպաստում է նաև եմ, լինիմ բայերի ազատ սղումը, երբ նախադասության միտքը պարզ է. օրինակ՝ Զի պսակ շնորհաց ընկալցի զլուխ քո, և մանեակ ոսկի ի պարանոցի բում, փոխանակ՝ Լիլիցի ի պարանոցի բում (Առակք, Ա, 9): Պետք է նշել, որ Երրայական բնագրում և հունարենում Լիլիցի չի սղված: Նաև՝ Յորժամ ի խաղաղ օդս և ի մարդս և յաղտիրս և ի դրախտս զբօսնուցուն, առողջագոյն և քաջատեսք (Ոսկերերան):

Գրաբարի հակիրճությանը մեծ չափով նպաստում են անորոշ դերբայի հետ տրական, բացառական և հայցական հոլովներով ենթակա ունեցող նախադասությունները, որոնք դասական լեզուների ընտրելագույն հատկություններն են համարվում: Փոխանակ երկրորդական նախադասությունը դիմավոր բայով և ուղղական ենթակայով արտահայտվելու, արտահայտվում է անորոշ դերբայով և հիշյալ հոլովներով զրվող ենթականերով: Հայերենը իր բնիկ տրական և

բառառական հոլովներին ալբյացրել է նաև ուղղականն ու հայցականը և այսպիսով ալո դարձվածք արաահայտմում է 4-րդ հարստանալով արտահայտման բազմազանությունը. օրինակ՝ Յարուցեալ հրահայտվել լուծանել զհանգոյցս մեկնոցին և առկանել նմա աղաբողոն (Թուղանդ): Իսկ ոմանս հնակաները համարին ունել սմա զրնութիւն (նույն տեղում, II, Դ): Բերված օր. համարվում են ընտիր հայկարանության դարձվածներ. սրանց զուգահեռ հայցականով ենթակա ունեցողները, որ համարվում են պատճենումը հոնարենի, որ սակայն նույնիսկ Եղնիկը ազատորեն գործ է ածում. օրինակ՝ Եթէ զամենայն զաստուած յամենայն ի հիւզն լինել ասիցեն (Լթե ասեն, որ ամբողջ աստվածը ամբողջ հիւզի մեջ է եղել): Ուստի զարուեստն յոչնչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել (Եղն., I, 2): Շատ ավելի գեղեցիկ ու վայելուչ է բացառականով ենթական. օրինակ՝ Զյուշկապարկաց (ըստ ձեռագրի) ասեն ընակել յաւերակսն (Եղն., I, ԻԴ): Յետ նոցա զՊեղասգացոց և զոմանց Յունաց ասեն ունել զերկիրն (Քրոն., էջ 172):

Հակիրճության ընտիր ոճերից է նաև այսպես ասված բնութագրական սեռականը, որ արդարև լեզվի վսեմության ու դասականության աներկրա հատկանիշ է, փոխանակ ասելու քեզ է պատկանում փառավորությունը, կամ հարուստ մտքերին է հատուկ օրենքներ իմանալ, պարզապես ասվում է. Քո միայն է փառավորություն (Ա.Բ., 95): Իմանալ օրէնս մտաց առատաց է, ճանաչել զօրէնս՝ մտաց բարեաց է (Առակ. ԺԳ, 15): Դիւաց է կերպարանս կերպարանս զուցանել (Եղն. I, ԻԴ): Այսպիսի խոսքը լսողին ու կարդացողին միայն հաճույք է պատճառում:

Լեզվի ժողովրդայնության, թարմության, հարստության ու կենդանության հատկանիշներից մեկը հոմանիշների առատությունն է, հոմանիշներ, որոնք ստույգ ու արտահայտիչ կերպով են բացահայտում հասկացողություններն ու մտքերը: Հոմանիշները ունենալով միևնույն առարկայական նշանակությունը, բացառիկ կերպով զրսևորում են իմաստային նրբերանգներ, որոնք իրենց հետ հանդես են բերում ոճաարտահայտչական հնարներ ու իմաստային խաղեր. հենց լեզվի այս նրբերանգների և իմաստային խաղերի գաղտնիքներն է, որ բացահայտել և հմտորեն օգտագործել են մեր դասական գրականության հեղինակները: Նրանք քաջ ըմբռնում էին լեզվի ոճարանական այն հատկանիշները, որոնք գրավելու էին ընթերցողին իրենց պեսպասությամբ, բազմազանությամբ և լեզվի իմաստային կողմի կրկնությամբ: Հոմանիշների գործածությունը խսկապես լեզվի ներքին իմաստային կրկնություն է, որով կարծես մեր անմահ առաջինները ընթերցողին ու լսողին ընձեռում էին լեզվի հասկանալիության բոլոր միջոցները. եթե այս ձևը մեկին անհասկանալի է, թող երկրորդը, երրորդը մատչելի դառնա: Եվ ըստ երևույթին այս մտահոգությամբ և մեր լեզվի հարստության ցուցադրության ազգային հպարտության զգացողությամբ ու նրա արտահայտչական բազմազան հնարների ներքնատեսական զգալիությամբ խոսքը դառնում էր երգ ու ներբող՝ մտքում պահելու, արտաբերելու և երգելու միանգամայն հարմար նյութ: Այդ է պատճառը, որ գրարարի շատ արձակ թարգմանություններ եկեղեցում երգվում են: Նշենք նաև, որ մեր թարգմանությունների հունական ու երբայական բնագրերը այդ հոմանիշները չունեն, գրանք միայն մեր լեզվի սեփական միջոցներն են և կիրառված են իրրև հայկարանություն, իրրև մեր լեզվի ազգային հատկանիշները զրսևորող հարստություն և ոճարանական հնար:



Այժմ ցուցադրենք հոմանիշների մի քանի պեսպեսություններ, որոնք Մեսրոպյան հայերենի գլխավոր առանձնահատկություններից են: Եզնիկ Կողբացիին իր գիրքը սկսում է այսպես. Յորժամ զաներեւոյթէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ որ, քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յստակել և զխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել: Զմիտս յստակել արտահայտութիւնը ամբողջութեամբ և ըստ առանձին մասերի հոմանիշ է գլխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել արտահայտութիւնների:

Ոճարանական պեսպեսության այս մարզում մեր հին գրականության ու գրական լեզվի հիմնադիրները արվեստագետ են ճիշտ այնպես, ինչպես զարդաքանդակող վառպետը, որ սմեն նրբութիւն հետեւողականորեն լրում է մարմարի վրա: Հոմանիշների կիրառության արվեստը պատահական չէ, դա մտածված ներքնազգացողութեամբ ընկալված ոճարանական մի հնար է, որ օրինաչափական է եղել նաև մեր բանավոր խոսքի համար: Այսպես հոմանիշներուն են ոչ միայն գոյականները, բայերը, ածականները, այլև բոլոր խոսքի մասերը, և եթե մի խոսքի մաս արդեն գործածված է, հարկ եղած զեպքում նույն խոսքի մասի համար կիրառվում է մի այլ հոմանիշ: Ըստ պլսպլս հիւանդութեան ազգի ազգի զեպս մատուցանել (ածական): Մխիթարեցէր զմիմեանս, զինեցէր զիրեւաւ (զերանուն): Զայս խորհեցայ և զսոյն արարից (զերանուն): Բրբե զեղբայր, որպէս զորդի (կապ): Մառայս կոչէ վասն բնութեանն և բարեկամս յաղագս շնորհացն (նախադրութիւն): Ոչ կարի վաղ և ոչ յոյժ անագան (մակրայ): Բնդէփ փոխեցաւ Ենովք և զմէ՝ ոչ մեռաւ (զերանուն): Ոչ եկի, քէ զատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից (շաղկապ): Ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն արբցէ (հոգ): Սորա շէն յաշխարհէ աստի, որպէս և ես շէմ յաշխարհէս (հոգ): Ինչպես նկատելի է, մինչև անգամ հոգը հոմանիշի օգնութեամբ է կրկնվում: Եզնիկ Կողբացիին մի փոքրիկ պարբերութիւն մեջ տասնյակ այդպիսի զույգ-զույգ հոմանիշներ է կիրառում. օրինակ՝ Քանզի ոչ եթէ կարօտ ինչ որ իւր էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ՝ իւր միայնոյ սեպհականեալ զկենդանութիւնն. և անզօր և տկար, եթէ անձին եւթ խորիցէ զգօրութիւնն. և ոչ նիազ ի գիտութենէ, եթէ ինքեան եւթ պահիցէ զգիտութիւնն և ոչ կարօտ յիմաստութենէ, եթէ յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր, կարծիք ինչ կարօտութեան ի ներքս մտանիցեն (I, Ա): Այստեղ հոմանիշներ են կարօտ, անզօր, տկար, նիազ. համապատասխանորեն հոմանիշ են խնայիցէ, խորիցէ, պահիցէ. իւր, անձին, ինքեան: Համեմատոր Բուդանդի հետևյալ նախադասության հետ. Որք բազում անձկայրեալ տրտմութեամբ և արտասուակաթ ողբովք և ծանրաթախած հոգով մեծաւ կոծովք և անհնարին աշխարանօք պաշարեալ... սղային (Բուդ., III, ԺԱ):

Ուրեմն ոչ միայն միևնույն նախադասության մեջ առանձին բառեր զույգ, երբևէն եռյակ հոմանիշներ են կազմում, այլև լրիվ նախադասութիւնները թե՛ ըստ ամբողջութեան և թե՛ ըստ առանձին անդամների: Եզնիկի օրինակի հետ համեմատիր. Ճարմանք մեծասքանչ. զի մի համ ճաշակոց ջուրցն, զոր ըմպէ արմատն և դարմանի, զարմատն այլ ազգ սնուցանէ, զրոգրոջն յայլ կերպարանս երեկցուցանէ, զուսն յայլ ի նմանութիւնս ջրչէ և աերեսն այլովք տպով՝ տպաւորէ, և զպտուղն այլով օրինակաւ նկտրէ (Բարսեղ Կեսարացի): Հոմանիշների գործածության արվեստը մշակված է իր բոլոր նրբութիւններով: Մինչև անգամ բարդ բառերի առանձին բաղադրիչներ հոմանիշներ են կազմում միմյանց հանդէպ. օրինակ՝ Ապա ժողովէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախումբ բանակ նախաբառակոյտ զօրացն (Բուդ., III, ԺԱ): Այսպես

կազմված են ցողահար և ցրտարեկ և խորշակահար լինելին, եղբայրասպան՝ և մանկակոտոր՝ և հայրախեղդ լինելոց էին: Եհար աստղն սպիտակարան և ոչ աստղն սևագործ: Մի վաղաշէջ երազանցուկ համարիցիս զհրդեհն: Հայաբարբառ հայերէնախօս գտաւ և այլն:

Ավելի հաճախ երկու հոմանիշ բայեր են կիրառւում միեւնույն քերականական ձևով, որոնք որոշակի խստացնում, սրում են նախադասության նշանակութիւնը. օրինակ՝ Իսկ իրրև յայն տեղի հասանէր և զհայ հոգն կոխէր, մեծամեծաբմբոստացեալ հպարտացեալ այլ ձայն շրջէր (Բուզանդ): Մի հայիք ընդ իս, զի ես սևացեալ ըխացայ (Երդ Երդոց, Ա, 5): Եւ կէսքն մօտ ի ձմեռն շունն խաղանդան ի ձմերոց յաշխարհ հեռաստանեայ (Բարսեղ Կեսարացի): Թաղաւորն Պարսից... նեղեցաւ տառապեցաւ տաղանապեցաւ տառակուսեցաւ, վարասէր լանձն իւր (Աղաթանգեղոս): Այսպէս ասվում է. Մանուկեալ տաղտկացաւ, կացի մնացի, շոգաւ դնաց, սպան սատակեաց, պատեալ պաշարեալ և այլն: Հոմանիշների կիրառության մի այլ ձևն էլ սևականով ավելագորութիւնն է: Մի որեւէ գոյական նախադասութեան մեջ կիրառւում է պահանջված հոլովով, իսկ այդ գոյականի վրա դրվում է դրա հոմանիշ մի (սակավ նաև երկու) բառ սևական հոլովով, որ կարծեք թարգմանում, բացահայտում է հիշյալ բառը: Շատ հաճախ օտար կամ անծանոթ բառը հենց այդպիսի սևականի ավելագորութեամբ իսկապէս բացատրւում է. օրինակ՝ ...փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց յամենայն ի մարտ և անխառնոցն պատերազմաց (Բուզանդ, III, Ը): Քաջութիւնս դարձեաց ի մարտս պատերազմաց (Աղաթանգեղոս, 12): Առեալ զան երկիրի (նույն տեղում, 7): Ոչ գտաւ դարման կերակրոյ (նույն տեղում, 42): Մինչև կողոպտեցաւ ամենայն մարմինք դիտն (Բուզանդ, IV, ՄԹ): Այդպէս ասվում է՝ Պատիժ պատուհասի, պատուէր հրամանի, սպաս պաշտաման, կար զօրութեան, այսպէս կատականաց, թիկունք օղնականութեան, թիւ համարոյ, սրտմտութիւն բարկութեան և այլն:

Ոճին մի առանձին վսեմութիւն, վեհ ու վայելուչ հանդիսավորութիւն է հաղորդում մասնական սևականը, ուր փոխանակ մակդիր-որոշիչը զրվելու գոյականների վրա իրրև լրացում, մակդիրները դառնում են գոյական, իսկ գոյականները՝ սևական հոլովով հատկացուցիչ և կազմում են հայաշունչ մի ոճ, որի զուգակիցը միայն ներկայումս գործածվում է ոճավորված գեղարվեստական գրականութեան մեջ: Օրինակ՝ Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ Բաղաճապն և արանացն ցանկալեաց: Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիւ և Բաշ առն և ձիոյ (Աղաթանգեղոս, 19): Ապա յետ այսորիկ փոխեալ լինէր Բաշ արանցն աշխարհաշէն Խոսրով (Բուզանդ, III, ԺԱ): Եւ առ զընտիր բնտիր մայրիցն (Եզեկ, ԺԷ, 3): Ընկէց ի ծով զընտիրս Բեժելոց (Երից, ԺԵ, 4): Տրուպս եմ առաքելոց (Եզեկ, IV, 5): Այս վեհասքանչ ձևերը մենք այժմ արտահայտում ենք բացառականով, որ շունի գրաբարի դասական վեհութիւնը: Իսկ գեղարվեստական գրականութեան և խոսակցութեան մեջ ասվում է մարմնի մետաքսը, ոսկու ազնիւը, ձյունի սպիտակը և այլն:

Բերված օրինակների մեջ ածականը նույն ձևը պահպանելով դառնում է գոյական, կա զրան հար և նման և նույնպէս տարածված վսեմ մի ոճ եւ, որը լեզվի վայելչության ու մեծափառութեան արտահայտութիւններից մեկն է: Ածականը փոխանակ գոյականի վրա զրվելու իրրև որոշիչ դառնում է վերացական գոյական և սևական հոլովով կապակցվում է գոյականի հետ իրրև նրա

համար որոշիչ և կազմում է այնպիսի մի կապակցություն, որ կոչվում է վերացական թանձրացականի փոխարեն: Փոխանակ ասելու դառն բաժակ, ասվում է բաժակ դառնություն. օրինակ՝ կարէր նոցա զօղուտ խրատու իմաստութեան շնորհել (Բուզ., V, Ա): Զարեգակն արդարութեան տեսանել (Աղաթանգեղոս, 797): Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսել իկիանէս զարմացաւ (նույն տեղում, 43): Բռնութեան օրհասի մեռանել (Եսեբէոս, 30):

Մեսրոպյան հայերենի սեղմության, ճկունության կարևոր միջոցներից մեկն էլ հոգն է, որ հայերենը մեծ չափով զանազանում է իր ժամանակի և այժմյան լեզուներից: Մինչդեռ հոգը ընդհանրապես արտահայտում է որոշյալություն, հայերենում որոշյալության հետ զրուկորում է նաև, թե տվյալ բառը խոսողի, խոսակցի և երրորդ զեմքի հետ ինչ առնչակցություն ունի. օրինակ՝ Աշակերտքն հարցին զաէր վասն կուրին, թէ ո՞յր մեղ է վասն կուրութեանդ (Եղնիկ, I, Ի): Աշխարհարարում կուրութեանդ պետք է նշանակեր շո՞ կուրութեան, սակայն դրարարում նշանակում է այդ քեզ մոտ գտնվող մարդու կուրութեան: Եթե այս նախադասությանը պատասխան տրվեր, ապա այսպես կլիներ. ծնողաց մեղ է վասն կուրութեանս (այսինքն՝ այս ինձ մոտ գտնվող կույր՝ կուրութեան): Իսկ եթե և հարցնողից և երկրորդ զեմքից հետո գտնվեր կույրը, ապա հարցը կլիներ այսպես. Ո՞յր մեղ է վասն կուրութեանս: Այսպիսով, դրարարում հոգը ստացական նշանակություն չունի, այլ ցույց է տալիս երեւ զեմքի հետ առնչակցության, տարածական և նույնիսկ ժամանակային հարաբերություն: Մեծ Երախտավոր Աճառյանը բերում է ավետարանի հետևյալ հատվածը. «էր ամբոխ յոյժ ի տեղւոջն. և ասեն ցՅիսուս. տեսանե՞ս զի ամբոխդ նեղ է զգեզ. և եւ ամբոխն ի բաց»: Ապա բացատրում է. «Առաջին ամբոխ՝ բառը անուշո՞ւ է. որովհետեւ դեռ այսինքն չէ, թե խոսքը ո՞ր ամբոխի մասին է. տեղւոջն ունի երրորդ զեմքի դիմորոշ. ող(ն), որովհետեւ այն տեղը խոսողից և խոսակցից հետո էր. ամբոխդ ունի երկրորդ զեմքի դիմորոշ հոգը (դ), որովհետեւ խոսողները ուզում են նրանով հայտնել, թե իրենց խոսած միջոցին ամբոխը գտնվում էր խոսակցի մոտ. վերջին ամբոխն ունի երրորդ զեմքի դիմորոշ. ողը(ն), որովհետեւ պատմության միջոցին ամբոխը պատմողից ու լսողից տեղով ու ժամանակով հետո էր»:

Եթե ուզենայինք ճշտությամբ թարգմանել նույն հատվածը աշխարհարարի, պիտի ասեինք. «Այնտեղ մի մեծ ամբոխ կար. ասացին Հիսուսին. տեսնո՞ւմ ես, որ այդ մոտդ եղած ամբոխը նեղում է քեզ. և ամբոխը հեռացավ»:

Այս ամենը քննելով գրաբարի նշանավոր քերական Վ. Չալրխյանը գրում է. «Գրաբարի մեծ առավելություններն է՝ անորոշ բառը հոգով (զորով մը) որոշելուն հետ միանգամայն անոր զեմքը, դիրքն ու ժամանակն որոշելը»²: Իսկ աշխարհահոշակ լեզվարան Մեյլեն ավելացնում է. «Դիմորոշ հոգերի ճիշտ կիրառությամբ է, որ երևան է դալիս հայերենի նախադասության հստակությունը. և այն .եղինակներն ու թարգմանիչները, որոնք կիրառում են այդ հոգերը մշտապես և ճիշտ դործածությամբ, տալիս են դրանով իրենց ոճին կյանք և հրապուրիչ: արտահայտություն: Այս կետում ուրիշ ոչ մի հնդեվրոպական լեզու չի հասնում հայերենին. դիմորոշ հոգերը այսպիսով կարծես փոխարինում են այն կորուստները, որ կրել է լեզուն այլ կետերում»³:

1 Հ. Աճառյան, Լիակատար քերական հայոց լեզվի, հ. Կ, 959—960:

2 Հ. Վրթանես Չալրխյան, Քեր. հայկադյան լեզվի, Վիեննա, 1885, էջ 294:

3 Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 961:

Մեսրոպյան հայերենը արդարև բանաստեղծական լեզու է: Իր էությունով բանաստեղծական այս լեզուն ունի նաև իր ձևական առանձնահատկությունները: Մեսրոպյան հայերենի բանաստեղծական առանձնահատկություններից մեկն էլ հնչյունական գեղեցիկ խաղերն են, որոնք խոսքը դարձնում են բարեհունչ, նպաստում են նրա կշռության կատարելության, պատկերավորության, և այդ խոսքը կարգալիս կամ լսելիս հաճույք ևս զգում և վայելում նրա երգայնությունը: Թվում է, թե մեր գրողները դիտավորյալ են ստեղծում մեր ականջին հաճելի հնչյունական խաղերը. անշուշտ, ինչպես ասվեց, նպատակադրություն եղել է և պետք է լիներ: Բուռն անհրաժեշտություն էր ժողովրդին սիրել տալ զբաղված խոսքը և նրան կապել այդ խոսքի հետ: Իսկ այս բանը հաջողվեց մեր մեծ երախտավորներին աներևակայելի չափերով: Հայությունը դրական խոսքը սրբաբերեց, դարձրեց իր պաշտամունքի երանքը և իր գոյության իմաստը կապեց նրա հետ: Մակայն կային նաև լեզվի ներքին և բնատուր հատկանիշները, որոնք ակամա տարբեր ձևերով հորդում էին մշտաբուխ ազդյունի նման և արձակ խոսքը դարձնում քաղցրալուր երգ ու երաժշտություն. օրինակ՝ «Այլ կենդանի է և աղբիւր կենդանութեան, և ինքն կայ լի և անսպառ կենդանութեան. և զօրացուցանէ զանգօրս մեծագօրս զօրութեամբ և ինքն ոչ թերանայ ի զօրացուցիչ զօրութենէն. և պարգևէ գիտութիւն ամենայն անգիտաց և ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ գիտութիւնն. և բոլսէ յամենեսին զանպակաս իմաստութիւն և ինքն մնա անխախտ յամենահնար իմաստութեանն (Եղեղիկ, I, Ա): Համեմատիր նաև. զի ածն ի շգոյ է ի գոյ զշգոյսն և ևցոյց յոչնչէ յինչ զէսն (նույն տեղում). զի չէրն չէին վասն չէին յայտ առնէր (Եղեղիկ, II, Ե):

Մեսրոպյան հայերենի բարեհնչության հատկանիշներից մեկն էլ այն է, որ գոյականի արմատով բարդ ածական է կազմում և կիրառում է իբրև մակդիր որոշիչ միեկնույն գոյականի համար: Գրկնության այս ձևը օրինաչափական էրևույթ է և բոլոր երկերում անխտիր գործածվում է. օրինակ՝ զէտն ճարարադէտ զգուշացուցէ զժողովուրդն ի սրոյ սուսերի (Ձգօն, 339): Զջուր ձիւնաջուր բմպէք զուք (նույն տեղում, 352): Եւհ մեծաշահ է մեծատանց: Ամոնախառն խառնուածով առցին զկատարումն սննդեանն: Զխարդ ծակոտեալ զրօշեալ են իբրև զործ Բանդակազործ զարմանալի տերեքն այգւոյ (Բարսեղ Կեսարացի): Եւ Էղիցի յաւուր յայնմիկ հարցեն փող աւագափող (Եսայի, Իէ, 13): Զայլ պան զիշերապան շուրջ զնոքաւք զգուշութեամբ իբրազգի ածէին (Գ Մակարայեցուց, Ե, 3): Բռնութեամբ հողմոց բռնաշունչն շնչելոյ (Կեսարացի) և այլն:

Նշանակությունների ուժեղացման և բարեհնչության այս հնարին շատ մոտ է բայի արմատը իրեն համար խնդիր դարձնելը, որ հատուկ է ժողովրդական հորդուն խոսքին: Խնդրառության այս ձևը այնքան է բնական, որ հաճախ այլևս դա չի ընկալվում իբրև խնդիր, այլ բայը և իր խնդիրը դառնում են մի հարադրական բարդություն և առնում են մի նոր խնդիր. օրինակ՝ Լուր լուալ յերկրէն Հայաստանէ (Բուդ., III, Ժ): Գրեւցէ նմա գիր ապահարզանի (Բ օրինաց, ԻԳ, 2): Որ կարող իցէ ուսումն ուսանել (Եղեղիկ): Յայգուէ և երկելոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա (Բուդանդ): Համեմատիր նաև՝ իրազգաց եղևալ իրացն. բերդակալք բերդացն, գործաւորք գործոյն, ձեռնադրութիւն ձեռաց, զօրադուլս զօրաց և այլն:

Այս ամեն հնչյունական և իմաստային նրբերանգների խաղերը պսակված են ոճի հստակությամբ, վսեմ վայելչությամբ, քերականական կանոնավորու-

թյամբ, զանազան խոսքի մասերի ընտրված ճոխություններ, հումանիզմների արվեստավոր փոփոխություններ, որոնք լեզուն դարձնում են մտքերը և զգացումները արտահայտելու մի հզոր միջոց, հորդուն իր կենդանի բնականություններ:

Սովորաբար թարգմանական դրականությունը հարուստ է լինում արվեստական նորակերտ բառերով: Մեր լեզվի հետագա պատմությունը ցույց տվեց այդպիսի արվեստական բառերի հաղարավոր օրինակներ: Նորագույն թարգմանություններն էլ զերծ չեն այդ արատից: Սակայն Մեսրոպյան հայերենը չունի արվեստական բառեր: Բարդ բառերը կազմված են հայերենի օրենքներով և այնքան են դրանք ճիշտ ու բնական, այնքան են կենդանի, որ տարօրինակ է լինում այն հեռավոր ժամանակի և նոր սկսվող դրական շարժման զույգ տեսանկյուններից դատելով: Այդ կենդանի բնականություններ է, որ մեր շատ թարգմանություններ արդարև համարվում են ազգային ինքնությունը գործեր, իրենց ազգային ոճով ու հայերենախոսություններ: Մեսրոպյան, իր ընկերներն ու աշակերտները սովորական առումով թարգմանիչներ չեն: Նրանք չեն կառուցել ոչ մի բնագրի, չեն կաշկանդվել բնագրի սեղմող շրջանակներում: Քաջահմուտ լինելով հայերենի ոգուն ու արվեստին, տիրապետելով նրա հարուստ բառազանձին, ծով դարձվածքներին, քերականության բաղադրյալի ձևերին, թարգմանելի բնագիրը յուրացրել ու հայացրել են այդ բոլոր միջոցների ամենարվեստ կիրառություններ: Թարգմանելիս ոչ միայն մտահոգվել են բնագրի բովանդակության ստույգ հայացմամբ, այլև հոգացել են լեզվի արվեստի առանձնահատկությունների ցուցադրմամբ, մի բան, որ բնագրերին հաճախ է պակասում: Նրանք մտածել են ամեն օտար երկ ազգային դարձնել: Օրինակ՝ Սողոմոնի առակների Ա զվար 24 հատվածի մի նախադասություն այսպես է. Յերկարէի դրանս իմ և ոչ անսայիք: Թե երբայական բնագրում և թե հունարենում բառախոսք (բառի փոխարեն գործածված է ձևով: Մեսրոպյան անմիտ է համարել ձևով և երկարում էի, և դով չէի՝ լսում. ձևով դարձրել է խոսք և ճշտել է նախադասությունը: Կամ՝ Զի ոչ եթէ տարապարտուց ձգեն գործիս թռչնոց (նույն տեղում, հատված 14): Երբայական բնագիրը և հունարենը թռչնոց բառից առաջ ունեն՝ ակն յանդիման ամենայն, որ ավելորդարանություն է, և հայ թարգմանիչը դուրս է գցել: Գլուխ Ե հատված 3-ում ասված է. «Զի մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի, ու առ ժամանակ մի պարարէ զիմն քո: Ընդգծված մասը երբայական բնագրում և հունարենում այսպես է. և նախորդ ևն քան զձէր քիմն ևնում: Մեսրոպյան անմիտ է համարել այս վերջինը. իսկայես ձևի հետ քիմն համեմատությունը ճապաղ է ու անմիաստ: Մի օրինակ ևս. Պահել դքեղ յառնակին կնոջ և ի շարախօսութենէ օտար լեզուի (Առակք 9, 24): Երբայական բնագրում և հունարենում առնակին կնոջ (ամուսին ունեցող կին) դիմաց կա չար կին: Մինչդեռ հայերենը նպատակային ու իրացի է, իսկ բնագիրը և հունարենը ընդհանուր և վերացական են: Այսպիսի ուղղումները, լրացումները հայերեն տարածվածաչափ հազարների և հասնում: Ինչպես տեսնում ենք, Մեսրոպյան չի թարգմանել սովորական թարգմանիչների նման, որոնք բառի դիմաց համապատասխան բառ են դնում՝ առանց հոգալու խոսքի նշանակության և արվեստի հատկանիշների մասին: Մեսրոպյան իմաստավորել ու ոճավորել է երբայական աստվածաշնչի անկազմակերպ և հաճախ անորոշ արտահայտությունները, ճշտել է դրանք, դարձրել է նպատակային, մեր իրականության համապատասխան ու փաստացի. և թարգմանել է այնպիսի բառերով ու նախադասություններով, որոնք իմաստարանորեն և շարահյուսորեն ստույգ, կազմակերպված, ամփոփ ու խոր լինելով հանդերձ, ասպա-

հուլի և խոսքի արվեստը, այսինքն՝ պարզությունը, սեղմությունը, ջերմ հուզականությունը, կշռույթը, հնչերանգային բազմազանությունը և խոսքի մշակույթի այլ հատկանիշներ: Մեսրոպյան հայերենը իր հղկվածությամբ, վճիռ պարզությամբ, բառերի ու քերականական ձևերի հմուտ փոփոխություններով, շարույթների ներդաշնակ ու համաչափ շարադասությամբ, բայերի բազմաձև խնդրառությամբ, նախդիրների պեսպես կիրառությամբ ու առատությամբ դարձել է մեր լեզվի հարստության ու արտահայտչական ծով հնարների ցուցադրման մի հանդիսարան: Ահա մի օրինակ, ուր դրսևորվել են հույզի ու զգացմունքների ինչպիսի՝ խորություններ. «Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս: Ողորմեա ինձ, տէր, զի հիւանդ եմ ես. լժշկեա զանձն իմ, զի խոտվեցան ոսկերք իմ. անձն իմ յոյժ խոտվեցաւ. և դու, տէր, մինչև ե՞րբ (Գիրք Սաղմոսաց, Զ, 1—4): Հրամայական նախադասություններին տրված է սրտակտուր աղաչանք՝ ու պաղատանքի զարմանալի մեղմ մի արտահայտչություն. այդ մեղմությանը, աղեկտուր խնդրանքին նպաստում են կոշականները և կրկնվող դերանունները, որոնք մի ազնիվ ու խաղաղ հանդիսավորություն են հաղորդում և մեծացնում են խոսքի հուզարտահայտչական ներքին հնարները: Վերջին հարցական նախադասությունը հորդում է հույզերով իր վերջին զու դերանվան շեշտումով, որ ունի հորդորող ու մեղմացնող մի հոգևորար ու հանդիմանական հույզիչ երանգ: Ընդ ինչպիսի հույզեր ու շեշտեր չի արտահայտում այդ հասարակ զու դերանունը, որի ստորոգյալը զեղչված է արվեստագետի վարպետությամբ. և զու, տէր, մինչև ե՞րբ այս զեղչման շնորհիվ խոսքը իր հետ բերում է նշանակությունների ու ապրումների շարքեր: Ինչպիսի ստորոգյալ ուղում եք, ավելացրեք, այդ հարցական պարզ նախադասության տարողությունը անշափելի է: Ահա հենց առաջին իսկ օրվանից ներշնչումներ ու ապրումներ, հարուստ մտքեր ու ծով զգացումներ է մարմնավորում ու բազմաշող ձևերով արտահայտում Մեսրոպյան հայերենը:

Շարահյուսական տարրերի հավասարաչափ ու համաչափ տեղարաշխումը, նման ձևերի կարգավոր զուգադրություններն ու հակադրությունները, մտքերի հստակ ձևակերպումներն ու կապակցումները լեզուն դարձնում են կշռույթավոր մի բանաստեղծություն: Ահա մի հատված Սողոմոնի առակներից, որ առաջին անգամ Եդեսիայում թարգմանվեց Մեսրոպի ձեռքով. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զգարծուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս. զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց, զմիտս և զհանճար. Որոց իբրև լուիցէ իմաստունն, իմաստնագույն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ զառաջնորդութիւն ստասցի: Ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկիւղ տեառն, հանճար բարի ամենեցուն, որ առնեն զնա. պաշտօն բարի առ աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն և զխրատ ամպարիշտք անգոսնեն»: Այս հատվածի վրա ուշադրություն է հրավիրվում ոչ թե նրա համար, որ Մեսրոպի առաջին գրավոր խոսքը իմաստության ու հանճարի փառարանությունն է, հակիրճության, ոճի հստակության մի գլուխգործոց է, այլ որպեսզի պարզ պատկերացում կազմենք, թե մեր իմաստուն ժողովրդի խոսքը ինչպիսի ներդաշնակ կշռույթով է առաջ գնում և ինչպիսի վսեմ մի խաղաղություն է շնչում: Մենք այստեղ փորձում ենք որոշել նաև այդ խոսքի կշռույթը:

Արձակ խոսքի կշռույթը սակայն է, սակայն երբ տարրեր խոսքեր համեմատում ենք, նկատում ենք, որ մեկի կամ մյուսի անկանոնության շարժը և ըստ այնմ էլ որոշում ենք, թե՞ զրանցից որի կշռույթը կանոնավորության շատ տարբեր ունի։ Բաժնու «Արարչության դաշտի առավոտը» համեմատաբար կշռույթավոր արձակ խոսք է, այսինքն՝ առանձին նախադասություններ իրենց վանկերի թվով մոտ են միմյանց կամ երբեմն էլ հավասար են. օրինակ՝ Բաժնու հարյուր ութսուն նախադասություններից ամենից շատ են ութ վանկանի նախադասությունները, որ ընդամենը 19 միավոր են կազմում։ Որքան միևնույն վանկաքանակ ունեցող նախադասությունները շատ լինեն, այնքան տվյալ խոսքի կշռույթը կանոնավոր է և ըստ այդմ էլ խոսքը կշռույթավոր է։ Սողոմոնի առակների 174 նախադասություններից ամենից շատ են 11 վանկանի նախադասությունները, որ կազմում են 32 միավոր։ Տոկոսային հարարերության բթե արտահայտելու լինենք Բաժնու հավասար վանկաքանակ ունեցող ամենաշատ նախադասությունները 10 տոկոս են կազմում, Սողոմոնի առակներինը 18 տոկոս է, իսկ վերցնենք իրար մոտիկ վանկաքանակ կազմող նախադասության 6 շարք իրրև ընդհանուր որակ կազմող քանակություն, ապա Բաժնու հինգ վանկանի նախադասություններից մինչև 10 վանկանի նախադասությունները (ներառյալ), կազմում են 84 միավոր, որ անում է մոտ 46 տոկոս։ Առակների 6 շարք նախադասությունների քանակը սկսած 19 վանկանի նախադասություններից վերջացրած 15 վանկանիներով կազմում է մոտ 70 տոկոս։ Այս հաշիվները ցույց են տալիս, որ մեր գրականության հիմնադիրները տիրում էին լեզվի արվեստի օրենքներին, հատկապես հաշվի էին առնում նաև խոսքի կշռույթը։

Այս մի քանի հատկանիշներն այն լույսից ու հրաշալիքներից են, որ հազար վեց հարյուր տարի թարմ ու կենդանի են պահում Մեսրոպյան հայերենը, ճիշտ է, հետագա դարերը աղարտեցին նրա արված ընթացքն ու դարգացումը, սակայն նա իր հրեղեն ճառագայթներով պատռել է դարերի խավարը և մեզ է հասցրել մեր առաջին մեծ հանճարների հոգու սուրբ կանչերն ու մտքի վսեմագույն իմաստությունները և մեր ժողովրդի պայծառ երազներն ու ապագայի տեսիլքները։ Մեսրոպյան հայերենը Մեսրոպի, Սահակի, Եզնիկի, Կորյունի և ուրիշ արդարորեն սրբացված մեծ հայերի մարգարեական ձայնն է, որ հնչում է հազար վեց հարյուր տարի և պետք է հավետ ղողանջի, որովհետև այդ ձայնը մեր պատմությունն է, մեր արվեստը, մեր հավատքը, մեր մանկան կյանք ազդարարող հիշրածերի իմաստուն հռոտանքը և կորովի պարմանու թշնամասաստ աղաչանքը։